ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «թ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է փաստաբանության ինստիտուտի հատուկ իրավական կարգավիճակով և գործունեության հանրային - իրավապաշտպան բնույթով:

2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում փաստաբանության ինստիտուտը ձեռք է բերել սահմանադրական կարգավիճակ, որի գործառնումն ուղղակիորեն աղերսվել է իրավաբանական օգնության ստանալու անձի հիմնարար իրավունքի հետ, որպես այդ իրավունքի իրացման հիմնական սահմանադրաիրավական կառուցակարգ:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:*

Սահմանադիրը, ըստ նշյալ իրավակարգավորման, փաստաբանության ինստիտուտին վերապահելով սահմանադրական կարգավիճակ, նաև սահմանել է փաստաբանության բնականոն գործունեության համար անհրաժեշտ երաշխիքներ՝ ի դեմ անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների:

Փաստաբանության անկախության և ինքնակառավարման սկզբունքների պատշաճ իրացման համար խիստ կարևոր է այդ ինստիտուտի անկախությունն ու ինքնաբավությունը պետությունից՝ ներառյալ փաստաբանության ինստիտուտի ֆինսանական կայունությունն ու ինքնուրույնությունը:

Ելնելով ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից՝ ընթացիկ օրենսդրությամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքով մանրամասնորեն կարգավորվում են փաստաբանության գործառնման կառուցակարգային և գործնական հարցերը: Ի մասնավորի, նախատեսված է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը՝ որպես փաստաբանության և փաստաբանների ինստիտուցիոնալ ներկայացուցիչ:

Մասնավորապես, «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ փաստաբանների պալատ) սույն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: (...):* Նույն հոդվածի հետագա շարադրանքում ամփոփված են Պալատի գործառույթները, որոնք վերաբերում են փաստաբանության գործունեության կազմակերպմանը, աջակցմանը, փաստաբանների և ունկնդիրների ուսուցմանը և այլն:

Գործառույթների այս համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Փաստաբանների պալատը փաստաբանական ամբողջ համայնքի ներկայացուցիչն է և փաստաբանության սահմանադրական ինստիտուտի կարգավիճակի իրացման կառուցակարգային պայմանների ապահովման պատասխանատուն: Պատահական չէ, որ նշյալ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 10-րդ հոդվածի 1-ին մասով հստակորեն սահմանված է, որ Փաստաբանների պալատի բարձրագույն մարմինը՝ փաստաբանների ընդհանուր ժողովը, կազմված է բոլոր փաստաբաններից, որոնք ընտրում են Փաստաբանների պալատի գործադիր մարմինը՝ Պալատի խորհուրդը:

Վերոնշյալ համատեքստում Փաստաբանների պալատի վրա դրված է փաստաբանության ինստիտուտի և փաստաբանների շահերի ներկայացման, պաշտպանության և գործունեության կազմակերպական ապահովման հիմնարար

գործառույթները՝ առանց որոնց՝ փաստաբանության ինստիտուտը թե՛ գործող օրենսդրության համաձայն և թե՛ գործնականում չի կարող գործել: Հետևաբար, խոսելով փաստաբանության անկախության և ինքնակառավարման սահմանադրական սկզբունքների իրացման մասին՝ ընդհանրական մակարդակում նախևառաջ նկատի են ունեցվում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անկախության և բնականոն գործունեության երաշխիքները, որպիսիններից մեկը ֆինանսական կայունությունն ու ինքնուրույնությունն է: Վերջինս պետք է ներառի նաև Պալատի հնարավոր ֆինանսական խնդիրների պարագայում պաշտպանության որոշակի կառուցակարգեր, ինչպիսին է՝ պաշտպանությունը սնանկությունից:

«Սնանկության մասին» գործող օրենքի ընթացիկ կարգավորումներով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն ընդգրկված չէ սնանկության ոչ ենթակա սուբյեկտների շարքում, ինչի հետևանքով ստացվում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմնի գործունեությունը կարող է սնանկության վարույթի արդյունքում դադարեցվել՝ սովորական օրենքի հիման վրա, որպիսի իրողությունը հակասում է Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի սահմանադրական սկզբունքին և նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության համակարգին, ինչպես նաև փաստաբանների պալատի՝ վերը նկարագրված կարգավիճակին:

Առաջարկվող իրավակարգավորմամբ առաջարկվում է «Սնանկության մասին» գործող օրենքում սնանկացման ոչ ենթակա ինստիտուտների շարքում ընդգրկել նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը: Նման մոտեցումը, մի կողմից, կբխի Պալատի սահմանադրական կարգավիճակից, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ինստիտուտի գործունեության դադարեցումը՝ ներառյալ սնանկության վարույթի միջոցով և արդյունքում, չի կարող իրականացվել սովորական օրենքների միջոցով, իսկ, մյուս կողմից, օրենսդրական երաշխիքներ կստեղծվեն՝ երաշխավորելու Պալատի նշյալ կարգավիճակից բխող ֆինանսական անկախության և կայունության համապատասխան կառուցակարգեր, ինչը համահունչ կլինի պետության կողմից ստանձնված պոզիտիվ սահմանադրական պարտականությանն ապահովել անձի իրավաբանական օգնություն ստանալու հիմնարար իրավունքը և այդ իրավունքի իրացմանը միտված փաստաբանության անկախությունն ու ինքնակառավարումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սնանկության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ « ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Սնանկության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում և ծախսերի ավելացում չի նախատեսվում: